08.04.22 **ք. Վանաձոր**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի նիստի

Մասնակցում էին՝

Հովհաննես Ավետիսյան- Աշխատանքային խմբի ղեկավար

Աննա Գասպարյան - Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ

Ալլա Նահապետյան- Աշխատանքային խմբի քարտուղար

Անդամներ՝

Վալերի Ջաղինյան

Հասմիկ Մկրտչյան

Իրինա Մարտիրոսյան

Լիլիա Աբրահամյան

Արբակ Սարգսյան

Լիլիթ Սինդոյան

Սյուզան Հովսեփյան

Նարինե Ղազարյան

Լիպարիտ Դալլաքյան

Վարդուհի Անանյան

Արտակ Դեմիրչյան- Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Սամվել Խառատյան- Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Աշխատանքային խմբի Կանոնակարգի ներկայացում և հաստատում (զեկուցող՝ Աշխատանքային խմբի ղեկավար, Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան:

2. Պետական աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ներկայացում (զեկուցող՝ Աշխատանքային խմբի անդամ, Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյան):

3. Հանքարդյունաբերական համայնքներում թափոնների կառավարման խնդիրները (զեկուցող՝ Աշխատանքային խմբի անդամ, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյան):

4. Համայնքների այլընտրանքային զարգացման հնարավորություններն ու հեռանկարները (զեկուցող՝ Աշխատանքային խմբի անդամ, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյան):

ՔՆՆԱՐԿՎԵՑ

1. Քննարկվեցին Աշխատանքային խմբի կանոնակարգի նախագծում նախապես ներկայացված փոփոխությունները:

2. Քննարկվեց Հասմիկ Մկրտչյանի առաջարկը՝ պետական, համայնքային կառույցների և ՀԿ սեկտորի համագործակցությամբ մարզի համայնքների համար կարևորություն ունեցող զարգացման ծրագրերի իրականացման նպատակով մարզում գործունեություն ծավալող ՀԿ-ների ներուժը և հնարավորություններն արտացոլող տվյալների ամբողջական բազա ստեղծելու վերաբերյալ:

3-4. «Հանքարդյունաբերական համայնքներում թափոնների կառավարման խնդիրները» և «Համայնքների այլընտրանքային զարգացման հնարավորություններն ու հեռանկարները» հարցերը զեկուցող «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ, Աշխատանքային խմբի անդամ Օլեգ Դուլգարյանի բացակայության պատճառով չներկայացվեցին:

ՈՐՈՇՎԵՑ

1. Նիստին ներկա Աշխատանքային խմբի անդամների կողմից Աշխատանքային խմբի կանոնակարգի վերջնական տարբերակը բաց քվեարկությամբ միաձայն արժանացավ նիստի մասնակիցների հավանությանը:

2. Հ. Մկրտչյանի առաջարկը՝ մարզում գործունեություն ծավալող ՀԿ-ների հնարավորություններն արտացոլող տվյալների ամբողջական բազա ստեղծելու վերաբերյալ, արժանացավ ներկաների հավանությանը, և որոշում կայացվեց մշակել ձևաչափ նշված տեղեկատվությունը հավաքագրելու համար:

3, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն ՀԿ-ի նախագահ, Աշխատանքային խմբի անդամ Օլեգ Դուլգարյանի բացակայության պատճառով որոշվեց նրա առաջարկած օրակարգային հարցերը տեղափոխել հաջորդ նիստի օրակարգ:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**